

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԿԵՏԱԴՐԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ
ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՎԱԶԳԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

1. Եթե բառն իբրև նշան անվանում է առարկայի հիմքում ընկած լեզվական իմաստը, ապա անբերան վերանվանում է այդ նույն իմաստի կոնկրետ (մասնագիտական) նշանակությունը, որն այլ բան չէ, քան տերմինային իմաստ: Ըստ այդմ, հասկացությունը ընդհանուր անվանումը վերածվում է մասնավորի (տերմինի կամ տերմինային անվանման): Ինչպես նկատում ենք, նման հարաբերության մեջ բառն ավելի ընդհանուր, իսկ տերմինը (տերմինային անվանումն) ավելի մասնավոր, նույնիսկ առանձնահատուկ գործառույթամբ է արտահայտում հիմքում ընկած հասկացությունը:

2. Կետագրական նշանները (կետ, գիծ, բացատ, գծային պատկեր և այլն) նույնպես լայն ըմբռնումով այլ բան չեն, քան բառային (բառակապակցական) միավորներ, որոնք լեզվի գրաբանության համակարգում իբրև տերմին (տերմինային անվանում) ամենից առաջ առանձնանում են մյուս միավորներից իրենց արտահայտության և բովանդակության պլաններով (ձևով և բովանդակությամբ): Դրանք հանգես են գալիս հիմնականում ինքնուրույն գործառույթամբ (հմտ. ստորակետ, վերջակետ և այլն), ինչպես նաև համատեղում են լեզվի տարբեր մակարդակների վերաբերող գործառույթուններ (հմտ. միջակ «ձայնեզ (բաղաձայն)» և «միջակետ», սուղ «կարճ ձայնավոր» և «ձայնավորի կամ վանկի կարծույթյան նշան» և այլն):

Այստեղ դրանց անգրագառնում ենք ոչ միայն հիշյալ հատկանիշների, այլև հետևյալ հանգամանքների նկատառումով. ա) առանձնացում հայտնի լեզվի ընդհանուր բառապաշարի մեջ՝ նկատի ունենալով ծագումը կամ առաջացումը, գործածության ժամանակը և ոլորտները, իրենց իսկ համակարգում նույնարժեք այլ միավորների հետ ունեցած առնչությունները, բ) բառակազմական-տերմինակազմական և իմաստաբանական վերլուծություն (բառային կառուցվածքը, տերմինի արտահայտած իմաստը կամ իմաստները, իմաստային խաչաձևում և այլն), գ) լեզվի ընդհանուր տերմինահամակարգում, իբրև լեզվաբանական տերմին (տերմինային անվանում), դրանց գործառույթյան բնութագրում՝ առնված ոչ միայն ինքնին, այլև ուրիշ բնագավառների համանուն կամ համարժեք տերմինների (տերմինային անվանումների) հետ հնարավոր դուրակցմամբ:

3. Արտահայտության պլանում կետագրական նշանները պարզ կամ արմատական, բարդ, ածանցավոր, բարդ ածանցավոր և բաղադրյալ կազմության միավորներ են: Դրանք առաջացել են պատմականորեն և ամենից

առաջ գործածվելիս են եղել Հայերենի քերականական աշխատություններում: Ուստի ներկայումս դրանք կամ գործածական, կամ գործածություններից գուրս մնացած տերմիններ են:

ա) Պարզ կամ արմատական կազմություններ տերմինները դալիս են Հայերենի հին շրջանից (Հմմտ. բուլթ, շեշտ և այլն), թեև քիչ չեն նույնպիսի կազմություն ունեցող, երկրորդաբար կետադրական արժեքով հանդես եկող տերմինները, որոնք հիմնականում հետագա ժամանակներում են ավելանում (Հմմտ. դուր, լյաշկ, քաշ և այլն): Ունենք հետևյալ պարզ կամ արմատական տերմինները. բուլթ, գիծ, դուր, թավ, լյաշկ, ծանր, կարճ, կետ, շեշտ, ողորկ, պատիվ, սյուն, սոսկ, սուղ, տաշ, քաշ և այլն:

բ) Կազմություններ բարդ տերմինները հիմնականում դալիս են Հայերենի հետագա շրջաններից, որովհետև տերմինային նորակազմության մեջ ևս բառաբարդումը համեմատաբար ուշ տեղի ունեցող երևույթ է: Այգուհանգերձ, այն գառնում է Հայերենի բառակազմության կենսունակ միջոցներից մեկը: Ունենք հետևյալ տերմինները. այբաթարց, ավարտակետ, բազմակետ, բթանչան, եղնգնաձև, երկակետ (նաև երկկետ), երկարանչան, թավանչան, կիսակետ, կիսաստոր, կիսենթամնա, կրկնասյուն, հարցանիշ (նաև հարցանչան), մեծակետ, միջակետ (նաև միջնակետ), ներսահատ, ներքևահատ, նշանագիծ, նշանագիր, չակերտ, պատվագիր, սղանչան, սոսկանչան, վերջակետ, փակագիծ և այլն:

գ) Ածանցավոր տերմինները գործածվում են Հայերենի թե՛ հին և թե՛ հետագա շրջաններում, որովհետև ածանցումն առհասարակ բառակազմական կենսունակ միջոց է Հայերենում: Առանձնացնում ենք հետևյալ ածանցավոր տերմինները. ապաթարց (նաև ապագարձ), առողանություն, արտաբերություն, բացահայտություն, բացատ, գծիկ, ենթամայն (նաև ենթամնա), ենթակետ, երկայն (նաև երկար), երկորյակ, ծակուկ, կախում, մակակետ, միջակ, ոլորակ, պարբեկություն, պարուկ, ստորատ, ստորակետ, ստորին, տրոհակ, տրոհություն և այլն:

դ) Բարդ ածանցավոր տերմինները համեմատաբար քիչ են, որովհետև դրանց բառակազմությունը փոքր-ինչ այլ է, քան մյուս կարգի տերմիններինը՝ կապված բաղադրող և բաղադրվող հիմքերի բարդ կամ ածանցավոր լինելու հանգամանքի հետ: Նման կազմությամբ տերմինները ևս հիմնականում երևան են դալիս Հայերենի հետագա փուլերում: Ունենք հետևյալ տերմինները. լրահնչություն, միջառումն, ներսադրական, ներքույարդրական, ներքսադրական, ներքսարական, նշանադրություն, շրջաբեկություն, պատվադրություն, քաղցրահնչություն և այլն:

ե) Առավել ուշ հանգես եկած կազմություններ են բաղադրյալ (բառակապակցական) տերմինները: Ընդ որում այստեղ ևս այդ կարգի տերմինները հիմնականում ունեն երկբաղադրիչ կազմություն, իսկ բառակապակցման տեսակետից ներկայացնում են որոշչային, հատկացուցչային, երբեմն այլ կարգի հարաբերություն: Ունենք հետևյալ տերմինները. անջատման գիծ, առողանության նշան, արտասանության նշան, բաժանման գիծ, բաժանման նշան, բարձրացող-իջնող շեշտ, բացականչական նշան, բացահայտության նշան, գրային նշան, երկար շեշտ, երկարացման կետ, երկարացման նշան, զարմացական կետ, զարմացական նշան, իջնող-բարձ-

րացող շեշտ, կախման կետ, կետ ավարտյալ, կետ ընդ ստորակիտի, կետ կատարյալ, կետ-ստորակետ, կոշտ նշան, կրկին միջակետ, Հարցական կետ, Հարցական նշան, Հետին կետ, միավորութայան նշան, միութայան գծիկ, մտածման նշան, նոր տող, պարույկաձև շեշտ, ստորակետ-դիծ, տողագարձի նշան, տրոհութայան նշան, փափուկ նշան և այլն:

4. Բովանդակութայան սլլանում կետագրական նշաններն ուղղորութայան առարկա են՝ ըստ բազմիմաստութայան, որն առնչվում է տվյալ տերմինահամակարգի այս կամ այն միավորի՝ այլ տերմինահամակարգերի նույնպիսի միավորների հետ ունեցած փոխհարաբերութայանը, ըստ հոմանշութայան՝ պայմանավորված նույն տերմինահամակարգում երկու և ավելի տերմինների իմաստով մոտ կամ մերձավոր լինելու հանգամանքով, և ըստ իմաստային սերտութայան՝ կապված այն բանի հետ, որ տերմինների մի մասը ուղղակիորեն, իսկ մյուս մասը ոչ ուղղակիորեն, նկարագրորեն (մեկից ավելի բառերով) է վերանվանում հիմքում ընկած իմաստը (ըստ այգմ էլ ունենք տերմին և տերմինային անվանում տարբերակումը):

Այստեղ որոշակի է տերմինի իմաստափոխությունը: Քերականական ըմբռնումների դարդացմանը զուգընթաց փոխվում են պատկերացումները նաև կետագրական այս կամ այն տերմինի նկատմամբ: Ըստ այդմ, նկատելի են պարզ կամ արմատական տերմինի փոխարեն բարդ կամ բաղադրյալ տերմինների գործածութայան դեպքեր, և ընդհակառակը (Հմմտ. բութ. և բթանշան, թավ և թավանշան, կետ ավարտյալ և վերջակետ, կախման կետ և կախում և այլն): Նման հանգամանքով է պայմանավորված այն, որ ժամանակակից Հայերենում կետագրական որոշ նշաններ ունեն դուգահեռ ձևեր (Հմմտ. բացականչական նշան և երկար, պարույկ և Հարցական նշան, ենթամնա և տողադարձի նշան և այլն): Այնուհետև, տերմինի իմաստափոխությունը հաճախ տեղի է ունենում նրա գործածութայան ոլորտի փոփոխութայան հետևանքով. բութ-ը հնում առոգանութայան նշան էր, իսկ նոր ժամանակներում դիտվում է բացահայտութայան, նաև տրոհութայան նշան, ենթամնա-ն հնում գործածվում էր իբրև «անհոգակապ բարդ բառերի բաղադրիչները միմյանց միացնող գծիկ», որը դրվում էր տողի մեջ, ցանկացած նման բառերի նեքևում, իսկ այսօր այն կիրառվում է իբրև տողադարձի նշան և դրվում է տողի վերջում¹:

ա) Տերմինի բազմիմաստությունը դիտական-ճանաչողական առումով թեև խրախուսելի է, սակայն պատմականորեն չի բացառվում նման տերմինների գործածությունը լեզվի ոչ միայն տարբեր տերմինահամակարգերում, այլև միևնույն տերմինահամակարգում: Այս երևույթը նկատում ենք նաև կետագրական նշանների գործածութայան դեպքում: Այսպես, ապաթարց, առոգանություն, բութ, ենթամնա, երկար, թավ, միջակետ, շեշտ, ոլորակ, պատիվ, պարույկ, ստորակետ, սուղ, վերջակետ, տրոհակ, տրոհություն, քաշ և նման շատ տերմիններ ոչ միայն Հնչյունաբանութայան, այլև բնագիտութայան, երաժշտութայան, տաղաչափութայան և այլ բնագավառների վերաբերող հասկացությունների անվանումներ են: Ավե-

1 Հմմտ. Ա. Մ ու ը ռ ա գ յ ա ն. Հունարան դպրոցը և նրա դերը Հայերենի քերականական տերմինաբանութայան ստեղծման գործում. Երևան, 1971, էջ 309 (այսուհետև՝ Մ ու ը ռ ա գ յ ա ն, 1971):

լին, Հայոց լեզվի պատմության փաստերը ցույց են տալիս, որ կետադրական շատ նշանների անվանումները միաժամանակ նշանակելիս են եղել տարբեր կարգի տերմինային իմաստներ. հմտ. միջակ 1) «ձայնեղ բաղաձայն» և 2) «միջակետ», սուղ 1) «արտասանական կարճ ձայնավոր կամ վանկ» և 2) «առողջանության նշան՝ գրված ձայնավորի վրա, նույն ձայնավորի կամ վանկի կարճությունը նշելու համար» և այլն (հմտ. Մուրադյան, 1971, 186, 193, 302, 308):

բ) Կետադրական նշանները ներկայացնում են բավականին մեծ թվով հոմանշային զույգեր (երկու և ավելի հոմանիշ տերմինների փնջեր): Այս իրողությունը բացատրվում է, ինչպես արդեն նշել ենք, Հայերենի քերականությունների զարգացման ընթացքում այս կամ այն երևույթի նկատմամբ հանդես բերված տարբեր պատկերացումների և ըմբռնումների գոյությունը, ինչպես նաև տերմինների գործածության հարցում ևս անմիակերպ մոտեցման, անմիասնականության դրսևորմամբ:

Ստորև տալիս ենք Հայերենի կետագրական նշանների ցանկը՝ ըստ հոմանշային փնջերի, որոնցում առաջինը նշվում է ելակետային միավորը (պայմանականորեն՝ գերադաս անդամը). ցանկը ներկայացնում ենք ըստ տերմինակազմության բնույթի՝ սկսելով պարզ կամ արմատական տերմիններից և ավատելով բաղադրյալ (բառակապակցական) տերմիններով: Տերմինների կրկնությունն անխուսափելի է, որովհետև այս դեպքում գործ ունենք հոմանշային փնջերի հետ. տվյալ դերադաս անդամին հոմանիշ տերմինները տալիս ենք կից փակագծում:

ա) Պարզ կամ արմատական գերազաս անգամով հոմանիշներ. բուլթ (բթանշան, ծանր), գիծ (անջատման գիծ, տաշ), գուռ (պատիվ, քաշ, նաև քարշ), թավ (թավանշան, խոշոր), լյաշկ (սոսկ), ծանր (բուլթ), կարճ (սուղ, սղանշան), կետ (տրոհակ), ողորկ (սոսկ), պատիվ (գուռ, քաշ, նաև քարշ), սոսկ (ողորկ, լյաշկ, սոսկանշան), սուղ (կարճ, սղանշան), տաշ (անջատման գիծ), քաշ կամ քարշ (պատիվ) և այլն:

բ) Բարդ գերազաս անգամով հոմանիշներ. այբաթարց, նաև ապաթարց, ապագարձ (ենթակետ, մակակետ, ներսահատ), ավարտակետ (կետ ավարտյալ, կրկին միջակետ, հետին կետ, մեծակետ, վերջակետ, տրոհակ), բթանշան (բուլթ), եզնգաձև (միջագրություն, փակագիծ, փարենթագիս, նաև փարինթագիս), երկարանշան (երկար, երկարացման կետ, երկարացման նշան, բացականչական նշան), թավանշան (թավ, խոշոր), կիսակետ (կիսաստոր, ստորակետ, ստորատ, ստորին), կիսաստոր (տե՛ս նախորդը), կիսենթամնա (ենթամայն, նաև ենթամնա, ներքսագրական, տողադարձի նշան), կրկնայուն (երկորյակ), հարցանիշ, նաև հարցանշան (հարցական կետ, հարցական նշան), մեծակետ (կետ ավարտյալ, կրկին միջակետ, հետին կետ, վերջակետ), միջակետ, նաև միջնակետ (միջակ), ներսահատ (ապաթարց, նաև այբաթարց, ապագարձ, ենթակետ, մակակետ), ներքևահատ (ներքոյադրական, ներքսադրական, ստորադիր, ստորատ), նշանագիծ (նշանագիր, պատվադիր), նշանագիր (տե՛ս նախորդը), պատվագիր (տե՛ս նախորդները), սղանշան (կարճ, սուղ), սոսկանշան (ողորկ, լյաշկ, սոսկ), վերջակետ (ավարտակետ, կետ ավարտյալ, կրկին միջակետ, հետին կետ,

մեծակետ, տրոհակ), փակագիծ (եղնգնաձև, միջադրություն, փարենթագիս, նաև փարինթագիս) և այլն:

գ) Ածանցավոր գերադաս անդամով հոմանիշներ. ապաթարց, նաև ապադարձ (այբաթարց, ենթակետ, մակակետ, ներսահատ), առոգանություն (առովասություն, արտաբերություն), արտաբերություն (տե՛ս նախորդը), գծիկ (միության դծիկ), ենթամայն, նաև ենթամնա (կիսանթամնա, ներքսադրական, տողադարձի նշան), ենթակետ (կիսակետ, ներքնահատ, ստորակետ, ստորին, ստորատ), երկար, նաև երկայն (բացականչական նշան), երկորյակ, նաև երկվորյակ (կրկնասյուն), կախում (կախման կետ), մակակետ (ապաթարց, նաև ապադարձ, այբաթարց, ներսահատ), միջակ (միջակետ, նաև միջնակետ), պարբեկություն (պարույկ, շրջաբեկություն), պարույկ (տե՛ս նախորդը), ստորակ (կիսակետ, կիսաստոր, ներքնահատ, ստորակետ, ստորին, ստորատ), ստորակետ (տե՛ս նախորդը), ստորատ (տե՛ս նախորդները), ստորին (տե՛ս նախորդները), տրոհակ (կետ) և այլն:

դ) Բարդ ածանցավոր գերադաս անդամով հոմանիշներ. առովասություն (առոգանություն, արտաբերություն), միջադրություն (եղնգնաձև, միջառումն, փակագիծ, փարենթագիս, նաև փարինթագիս), միջառումն (տե՛ս նախորդը), ներգոյադրական (ներքևահատ, ներքսադրական, ստորադիր, ստորատ), ներքսադրական (տե՛ս նախորդը), շրջաբեկություն (պարբեկություն, պարույկ) և այլն:

ե) Բաղադրյալ (բառակապակցական) դերադաս անդամով հոմանիշներ. անջատման գիծ (գիծ, բաժանման դիծ, տաշ), առոգանության նշան (առովասության նշան, արտաբերության նշան), բաժանման գիծ (անջատման գիծ, գիծ, տաշ), բաժանման նշան (տե՛ս նախորդը), բարձրացող-իջնող շեշտ (երկար շեշտ, պարույկաձև շեշտ), բացականչական նշան (երկար, երկարացման նշան, զարմացական կետ, զարմացական նշան), գրային նշան (գլանիչ, գլանչան), երկարացման կետ (երկար, բացականչական նշան, երկարանչան), երկարացման նշան (տե՛ս նախորդը), երկար շեշտ (բարձրացող-իջնող շեշտ, իջնող-բարձրացող շեշտ, պարույկաձև շեշտ), զարմացական կետ (բացականչական նշան, երկար, երկարացման նշան, զարմացական նշան), զարմացական նշան (տե՛ս նախորդը), իջնող-բարձրացող շեշտ (երկար շեշտ, սլարույկաձև շեշտ), կախման կետ (կախում, մտածման նշան), կետ ավարտյալ (կետ կատարյալ, հետին կետ, վերջակետ, կրկին կետ, տրոհակ), կետ կատարյալ (տե՛ս նախորդը), կետ ընդ ստորակիտի (կետ-ստորակետ), կետ-ստորակետ (տե՛ս նախորդը), կրկին միջակետ (կետ ավարտյալ, կետ կատարյալ, վերջակետ, տրոհակ), հարցական կետ (հարցական նշան, հարցանիչ, նաև հարցանչան, պարբեկություն, պարույկ, շրջաբեկություն), հարցական նշան (տե՛ս նախորդը), հետին կետ (կետ ավարտյալ, կրկին միջակետ, վերջակետ, տրոհակ), միավորության նշան (դծիկ, միության գծիկ), միության գծիկ (տե՛ս նախորդը), մտածման նշան (կախման կետ, կախում), տողադարձի նշան (ենթամայն, նաև ենթամնա, կիսանթամնա, ներքսադրական) և այլն:

5. Կետադրական նշաններն առանձին հետաքրքրություն են ներկայացնում հայոց լեզվի արմատաբանության (արմատի ծագման կամ առաջացման, բառակազմական և ձևակազմական հիմքերի մասնակցության և

այլն) տեսակետից: Անկախ բառակազմական և ձևակազմական միջոցների և եղանակների առանձնահատկություններից՝ այդ բառարմատներն ունեցել են կարևոր նշանակություն ոչ միայն առհասարակ բառերի, այլև կետադրական տերմինների կազմության գործում: Կետադրական տերմինների կազմության համար հայերենի առանձին փուլերում գործազրվել է մոտավոր հաշվումներով ավելի քան յոթ տասնյակ արմատ՝ չհաշված Դիոնիսիոս Թրակացու քերականության թարգմանության մեջ իբրև նախածանց դիտված արտ-, բաց-, պար-, ստոր- (նախավերջինը և վերջինն այլ կազմության մեջ արմատ են պար-ույկ, ստոր-ին և այլն) արմատները և առարմատական նախդիրը:

Ստորև անդրադառնում ենք այդ արմատներին: Նախ նշելու ենք զրանց բնիկ, փոխառյալ կամ անհայտ ծագման լինելը, այնուհետև տալու ենք տարբեր ժամանակներում դրանցից կազմված կետադրական տերմինները՝ ըստ հնարավորին պարզելով առաջացման ժամանակի, առաջին կիրառողի, այլև տերմինի բացատրության հետ կապված հանգամանքները:

ա) Կետադրական տերմինների կազմությանը մասնակցած բնիկ կամ հնդեվրոպական (Հե.) ծագման արմատները դրեթե նույնքան են, ինչքան փոխառյալ և անհայտ ծագման արմատները, որոնք կրկնակի են, քան փոխառյալները: Դրանք են՝ ած(-եմ), առ(-նում), աս(-եմ), բազում (բազմ-), բան, բարձ(-ր), բաց(-ատ), բեկ(-անեմ), բեր(-եմ), բութ, գիր(գր-), գարձ, դիր(դր-), (ե-)դունգ(-ն), երկ(ո), զարմ, թաւ, լիր, (լր-), կէտ, կր(-կին), հարց, հունչ(հնչ-), ձայն, ձև(ձեւ), մեծ, մ(ի)(-այն), մէջ, միտ(ք), յետ(-ին), ներք(-ին), նոր, շեշտ, ողորկ (ո-ղորկ), ով, սիւն, փափ(-ուկ), քաղց(-ր):

Հայ. ած(-եմ) «բերել» <Հե. *ag', այլև Հե. *ak', *ag'e²: Մտածման *u₂aw* (իւ. Աբովյան) «կախման կետեր»²:

Հայ. առ(-նում) «առնել, գրավել, վերցնել» <Հե. *ar- (Հմմտ. ՀԱԲ, 1, 247-248), այլև *ar-nu-mi (Հմմտ. Ջահուկյան, 1987, 113): Միջառումն (Բաղդ. Դպիր) «փակադիր»⁴: ԼԲ-ն չունի այս տերմինը:

Հայ. աս(-եմ) «խոսք, ասածը» <Հե. *ag'- (Հմմտ. ՀԱԲ, 1, 265-266), այլև *θg- (t-) (Ջահուկյան, 1987, 121. Հմմտ. ըստ իս՝ առ-ակ, առ-ած և այլն): Արտասանություն, արտասանության նշան, առոգանություն նշան (ԼԲ, 40):

Հայ. բազում (բազմ-, *րանձ-ում) «չատ», այլև «մեծ, (հուն. պատճ.) <Հե. *b^hng'h-u- (Հմմտ. ՀԱԲ, 1, 378, Гамкрелидзе-Иванов, 1984, 200, Ջահուկյան, 1987, 116): Բազմակետ «երեքից ավելի կետերից բաղկացած նշան» (Հմմտ. ԼԲ, 42):

2 Հմմտ. Հ. Ա ճ ա ո յ ա ն. Հայերեն արմատական բառարան. հ.1, Երևան, 1971, էջ 101-102 (այսուհետև՝ ՀԱԲ), Т. В. Г а м к р е л и д з е, В. В. И в а н о в. Индоевропейский язык и индоевропейцы. Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры. 1-2, Тбилиси, 1984, 107 (այսուհետև՝ Г а м - к р е л и д з е - И в а н о в, 1984); Գ. Բ. Ջ ա հ ու կ յ ա ն. Հայոց լեզվի պատմություն. նախադրային ժամանակաշրջան. Երևան, 1987, էջ 111 (այսուհետև՝ Ջ ա հ ու կ յ ա ն, 1987):

3 Հմմտ. Հ. Զ. Պ ե տ ռ ո ս յ ա ն, Ս. Ա. Գ ա լ ս տ յ ա ն, Թ. Ա. Ղ ա ռ ա - դ յ ու լ յ ա ն. Լեզվաբանական բառարան. Երևան, 1975, էջ 221 (այսուհետև՝ ԼԲ):

4 Հմմտ. Գ. Բ. Ջ ա հ ու կ յ ա ն. Գրաբարի քերականության պատմություն. Երևան, 1974, 298 (այսուհետև՝ Ջ ա հ ու կ յ ա ն, 1974):

Հայ. բան(<*բալ) «խոսել, ասել» <հե. *bha - (Հմմտ. ՀԱԲ, 1, 283-286), այլև *bha-ni-s կամ *bha- (Ջահուկյան, 1987, 115): Շեշտաբանություն (Հմմտ. ԼԲ, 242):

Հայ. բարձ(-ր), բառնամ (*բարձնամ) <հե. *bhrǵ'h-na- (Հմմտ. ՀԱԲ, 1, 413-414, այլև Γαμκρελιαძე-Иванов, 1984, 200, Ջահուկյան, 1987, 16): Բարձրացող-իջնող շեշտ (տոն), իջնող-բարձրացող շեշտ (տոն), երկբարձունք շեշտ (տոն): Հմմտ. ԼԲ, 62, 94, 120:

Հայ. բաց(-ատ) <հե. *bhā-n- (Հմմտ. Ջահուկյան, 1987, 115), ըստ Աճառյանի՝ անհայտ ծագման բառ (ՀԱԲ, 1, 403-404): Բացատ (Արս. Բագրատունի) «միջակետ, միջակ» (Հմմտ. Ջահուկյան, 1974, 532)⁵:

Հայ. բեկ(-անեմ) «կոտրել, կտրել, զատել, ջարդել» <հե. *bheg- (Հմմտ. ՀԱԲ, 1, 436, այլև Ջահուկյան, 1987, 115): Շրջաբեկություն (<հուն. περισπωμαενος «շուրջը ձգվող», «պարուկ», այլև պարբեկություն (Հովհ. Երզնկացի) «նույնը, ինչ նախորդը» (Հմմտ. Մուրադյան, 1971, 306. ԼԲ-ն չունի այս տերմինները):

Հայ. բեր(-եմ) «բերել, ածել, կրել» <հե. *bher- (Հմմտ. ՀԱԲ, 1, 440-441), այլև *bhere- (Ջահուկյան, 1987, 116): Արտաբերություն (Ստ. Սյունեցի) «արտասանություն», արտաբերում «նույնը, ինչ նախորդը» (Հմմտ. ԼԲ, 38):

Հայ. բութ(բու-թ) «հաստ, գուլ» <հե. *bhu-t (Հմմտ. ՀԱԲ, 1, 479, այլև Ջահուկյան, 1987, 115): Բութ (Թրակ. Թարգմ., հուն. βουτυς «ծանր շեշտ», βουτιά «ծանր առողանություն»): Հմմտ. Մուրադյան, 1971, 306, ԼԲ, 69: Բթանշան (Միք. Չամչյան) «բութ, բութի նշան» (Հմմտ. ԼԲ, 69):

Հայ. գիր (գր-) <հե. *uēro- (Հմմտ. ՀԱԲ, 1, 56, այլև Ջահուկյան, 1987, 156): Գրագարձ (Գ. Սկևռացի) «տողադարձ» (Հմմտ. ԼԲ, 76), գրանիշ, գրանշան, գրային նշան (տե՛ս ԼԲ, 77), նշանագիր (Միս. Սեբաստացի) «պատիվ, պատվագիր, նշանագիր» (Հմմտ. ԼԲ, 234), պատվագիր (Գ. Ավետիքյան) «նշանագիր» պատվագրություն (Միս. Ջուղայեցի) «պատվի նշան դնելը» (Հմմտ. ԼԲ, 258):

Հայ. գարձ(դար-ձ, *դարձնամ) <հե. *dhrǵ'hi - (Հմմտ. ՀԱԲ, 1, 639, այլև Ջահուկյան, 1987, 120): Ապագարձ (նաև այբադարձ), փոխ. ապաթարց «բարեհնչության համար գեղջված ձայնավորի փոխարեն դրվող նշան» (Թրակ. Թարգմ., պատճ. հուն. ἀπόστροφος-ի, ընդ որում ἀπο- «ապ-, բաց-», τροφος, τροφή դարձ «դառնալ», այսինքն՝ «անտեսում, բացթողում»): Հայ. դարձ//թարց տարբերակայնությունը հետևանք է հին շրջանի դրական և բարբառային երկակիության (Հմմտ. Մուրադյան, 1971, 309), Գրադարձ (Գ. Սկևռացի) «տողադարձ», տողադարձ (Գ. Ավետիքյան), «գրադարձ», տողադարձի նշան (Միք. Սալլանթյան) «ենթամնա» (Հմմտ. ԼԲ, 76, 294):

Հայ. գիր(դր-) «դնեմ» <հե. *dhē-ne (Հմմտ. ՀԱԲ, 1, 671, այլև Ջահուկյան, 1987, 119): Կետադրության նշան, կետադրություն (Միս. Սեբաստացի):

⁵ Հմմտ. Գ. Բ. Ջահուկյան. Ժամանակակից Հայերենի տեսության հիմունքները. Երևան, 1974, էջ 99 (այսուհետև՝ Ջահուկյան, 1974):

տացի), միջադրույթյուն (Մ. Տեր-Հարույթյունյան) «փակադիծ», ներքոյադրական, ներքսոդրական (Ստ. Սյունեցի), ներսոդրական (Ստ. Սյունեցի, նաև Հովհ. Երզնկացի, Գ. Սկևռացի) «ենթամնա» (Հմմտ. ՆՀԲ, 2, 423), նշանադրույթյուն (Միք. Չամչյան), շեշտադրույթյուն, շեշտադրում, պատվադրույթյուն (Հմմտ. ԼԲ, 151, 216, 232-233, 235, 242, 258), ըստ որում ԼԲ-ն չունի ներքոյադրական, ներսոդրական, իսկ ներքսոդրական-ը կետադրական նշանների թվարկման մեջ է նշվում:

Հայ. եղունգն (ե-ղունգ-ն) < Հե. *lung- (Հմմտ. ՀԱԲ, 2, 22-23), այլև Հե. *e-nongh- < *ongh-li- (Հմմտ. Ջահուկյան, 1987, 141, արմատի ծագման հարցում կա դժվարույթյուն): Եղնգնաձև (Բաղդ. Դպիր, ըստ ԼԲ-ի Գ.Ավետիքյան, որ ճիշտ է) «փակադիծ» (Հմմտ. Ջահուկյան, 1987, 298, ԼԲ, 88):

Հայ. երկ(ո) < Հե. *duo- (Հմմտ. ՀԱԲ, 2, 65-66, այլև Ջահուկյան, 1987, 119), նաև Հե. *t'u-o- (< *t'u-o-), *t'u-i- (բառաբարդման մեջ. Հմմտ. Гамкредлидзе-Иванов, 1984, 844), թեև ավելի հավանական է Հե. *du-o- կամ *t'u-o- (նաև *t'u-o- բաղադրույթյամբ վերականգնումը⁶: Երկակետ, նաև երկկետ (ռուս. двоеточие, Խ.Աբովյան, Հմմտ. ԼԲ, 92), երկայն (Թրակ. Թարգմ. հուն. μαχρός «երկար ձայնավոր», Ստ. Սյունեցի, իբրև «երկար, բացականչական նշան»), երկար (Թրակ. Թարգմ., հուն. μαχρός), երկարանշան (Միք. Չամչյան) «երկար», երկարացման կետ (նշան) «բացականչական նշան» (Հմմտ. ԼԲ, 93): Ի դեպ՝ վերջինիս մեջ երկարացման նշան-ը չի տրվում նշանների թվարկման մեջ: Երկար շեշտ (իմաստով համապատասխանում է պարուկյաձև շեշտ-ին, բարձրացող-իջնող շեշտ-ին, իջնող-բարձրացող շեշտ-ին և այլն), երկբարձունք շեշտ (Հմմտ. նախորդները), երկորյակ, նաև երկվորյակ (Մի. Սեբաստացի) «կրկնասյուն» (Հմմտ. ԼԲ, 92-93) և այլն:

Հայ. զարմ (զ-ար-մ) < Հե. *g'hó-or-mo- (Հմմտ. ՀԱԲ, 1, 326-327, նաև 2, 84, այլև Ջահուկյան, 1987, 123, 237, 243): Ջարմացական կետ, զարմացական նշան (Խ. Աբովյան) «բացականչական նշան» (Հմմտ. ԼԲ, 97):

Հայ. թաւ «թանձր, խիտ» < Հե. *t'au- (Հմմտ. ՀԱԲ, 2, 163, այլև Ջահուկյան, 1987, 154): Թաւ 1) «չնչեղ խուլ բաղաձայն», 2) «(չնչեղ) առողանույթյան նշան» (Թրակ. Թարգմ. հուն. δασυς, δασια «դասիա»): Հմմտ. Մուրադյան, 1971, 193, 308: Թաւանշան (XII-XIII դդ.): ՆՀԲ-ն (1, 800) չունի (Հմմտ. ԼԲ, 107)⁷:

Հայ. լիբ (լի-բ, լր-ումն) < Հե. *ple-ro-s (Հմմտ. ՀԱԲ, 2, 279, այլև Ջահուկյան, 1987, 143): Այլ Հե. p[h]len-ro-s > Հայ. լի-«լիքը, լեցուն, լրիվ» (Гамкредлидзе-Иванов, 1984, 782): Լիաձայնականույթյուն, լիաձայնավորույթյուն, լիաձայնույթյուն (երեքն էլ նույն իմաստով՝ «լիահունչ արտա-

6 Հմմտ. В. В. Иванов. Первоначальная глубинная структура текста гимна Вахагну и проблемы древнеармянской этимологии. — Международный симпозиум по армянскому языкознанию. Ереван, 21-25 сентября 1982; Доклады, Ереван, 1984, с. 61-81 (այսուհետև՝ Иванов, 1984). С h. de L a m - b e r t e r i e. Millet et l'armenien. — Histoire, epistemologie, langage. T. 10, fasc. 2, 1988, pp. 217-233 (L a m b e r t e r i e, 1988).

7 Հմմտ. Գ. Աւետիքեան, Խ. Սիւմէլեան, Մ. Աւգետեան. Նոր բառգիրք հայկազնան լեզուի. հ. 2, Վենետիկ, 1837, էջ 426 (այսուհետև՝ ՆՀԲ, 1, ՆՀԲ 2):

սանություն, նման արտասանության համար կիրառվող նշան»։ Հմմտ. ԼԲ, 133)։ Լրահնչություն (Մխ. Սեբաստացի) «լիահնունչ լինելը» (Հմմտ. Զահուկյան, 1987, 251)։

Հայ. կէտ «նպատակ, կետ» <հե.*geid- (Հմմտ. Զահուկյան, 1987, 124)։ Ըստ Աճառյանի՝ անհայտ ծագման բառ (Հմմտ. ՀԱԲ, 2, 583)։ Ավարտակետ (Արս. Բագրատունի) «վերջակետ» (Հմմտ. Զահուկյան, 1974, 532, ԼԲ, 31), ըզգմակետ (տե՛ս վերը), ենթակետ (Արս. Բագրատունի) «ստորակետ» (Հմմտ. Զահուկյան, 1974, 531, ԼԲ-ն չունի), երկակետ, նաեւ երկկետ (տե՛ս վերը), երկարացման կետ (տե՛ս վերը), զարմացական կետ (տե՛ս վերը), կախման կետ(եր), (Հմմտ. ԼԲ, 145), կետ(ք) 1 «կետադրություն», 2 «կետադրության նշան» և 3 «վերջակետ» (Թրակ. թարգմ., հուն. ΣΤΙΓΜΗ՝ «կետ»։ Հմմտ. Մուրադյան, 1971, 301-302, ԼԲ, 151), կետադրություն (տե՛ս վերը), կետադրության նշան(ներ) (տե՛ս վերը), կետ ավարտյալ (Թրակ. թարգմ., պատճ. հուն. ΤΕΛΕΙΑ ΣΤΙΓΜΗ՝ Հմմտ. Մուրադյան, 1971, 301-302), կետ ընդ ստորակիտի (Խ. Արովյան) «կետ-ստորակետ» (ԼԲ, 151), կետ-ստորակետ (ԼԲ, 151), կիսակետ «ստորակետ» (ԼԲ, 152), կրկին միջակետ (տե՛ս վերը), հարցական կետ (տե՛ս ստորև), հետին կետ (տե՛ս ստորև), մակակետ (Կղ. Գալանոս) «ապաթարց» (Հմմտ. ԼԲ, 207), մեծակետ (տե՛ս ստորև), միջակետ, նաև միջնակետ (տե՛ս ստորև), ստորակետ (Թրակ. թարգմ. պատճ. հուն. ΥΠΟΣΤΙΛΜΗ՝, այն է՝ ΥΠΟ «ենթ-, տակը» և ΣΤΙΛΜΗ՝ «կետ» (Հմմտ. Մուրադյան, 1971, 302, ԼԲ, 279), ստորակետ-գիծ (ԼԲ, 279), վերջակետ (Կղ. Գալանոս, Հմմտ. ԼԲ, 286) և այլն։

Հայ. կր-կին (<ե-րկ-ին, ե-րկ-իր, ե-րկ-ու և այլն). տե՛ս վերը՝ երկ-ո-ւ արմատի տակ (Հմմտ. նաև ИВАНОВ, 1984, 61-86)։ Կրկին միջակետ (Ավգերյան) «վերջակետ», կրկնասյուն «երկորյակ, երկվորյակ» (Հմմտ. ԼԲ, 158, 160)։

Հայ. հարց (հար-ց) «հարցնելը, փորձ, քննում» <հե.*prek'- (Հմմտ. ՀԱԲ, 3, 62-63), այլև *prk-sk'- (Հմմտ. Զահուկյան, 1987, 144)։ Հարցական նշան (Ավգերյան), հարցական կետ, հարցանիշ, հարցանշան (Հմմտ. ԼԲ, 178)։

Հայ. հունչ (հունչ-չ, հնչ-) «հնչելը, ձայն» <հե.*son- (այլև sun) (Հմմտ. Զահուկյան, 1987, 152). ըստ Աճառյանի՝ «բնաձայն բառ կազմված է ձայնից» (ՀԱԲ, 3, 123)։ Լրահնչություն (Մխ. Սեբաստացի), քաղցրահնչություն (Հմմտ. Զահուկյան, 1987, 251)։

Հայ. ձայն < հե.*g'huɛnii- (Հմմտ. Զահուկյան, 1987, 129). ըստ Աճառյանի՝ «անստույգ բառ» (ՀԱԲ, 3, 144-145)։ Լիաձայնականություն, լիաձայնավորություն, լիաձայնություն (տե՛ս վերը)։

Հայ. ձեւ <հե.*g'heu- (Հմմտ. ՀԱԲ, 3, 10, Զահուկյան, 1987, 128). ըստ իս՝ ձեւ (*ձե-ւ) <հե.*g'he-ւ- (Հմմտ. ձի-գ <հե.*g'hē-ւ-)։ Եղնգնաձև (Բաղդ. Դպիր) «միջառումն, փակագիծ, փարենթազիս» (Հմմտ. Զահուկյան, 1974, 298)։

Հայ. մեծ <հե.*megd-/meg'a- (Հմմտ. ՀԱԲ, 3, 295), *meg'a- (Զահուկյան, 1987, 137), այլև հե.*mek'h- «մեծ» (Гамкрелидзе-Иванов, 1984, 782)։ Մեծակետ (Անանուն) «վերջակետ» (Հմմտ. ԼԲ, 212)։

Հայ. մի, մայն (<*մ(ի)ա-յն)<հե.*smio (հմմտ. ՀԱԲ, 3, 316-317), այլև *smiio-s, *smiia (Ջահուկյան, 1987, 147): ենթամայն «անհոդակապ բարդ բառերի բաղադրիչների միացման գծիկ ներքևից» (Թրակ. Թարգմ. սլատճ. ἰμεν-ի, այն է՝ ν'πιο- «ենթ-, տակը» և ἔν(εν) «մի, մեկ», հմմտ. Ջահուկյան, 1954, 75, 113, Մուրադյան, 1971, 309): ենթամայն «տողադարձի տողի վերջում դրվող նշան» (Կղ. Գալանոս), կիսաենթամայն (Արս. Բազրատունի): Հմմտ. Ջահուկյան, 1974, 530: Այլև՝ միավորության նշան (հ. Արովյան), միութայն գծիկ (հմմտ. ԼԲ, 219):

Հայ. մէջ (միջ-)<հե.*medyos (հմմտ. ՀԱԲ, 3, 313), այլև *me(i)dhiio- (հմմտ. Ջահուկյան, 1987, 137): Միջադրություն (Մ.Տեր-Հարությունյան) «փակագիծ», միջակ 1) «ձայնեղ բաղաձայն» (<հուն.*μῆ'σος «միջին»), 2) «միջակետ» (<հուն. μῆ'σῆ «միջին»), (Թրակ. Թարգմ. Անանուն, Ես. Նչեցի), միջառումն «եղնդնածև, փարենթադիս» (Բաղդ. Դսիր), միջակետ (Անանուն, Հովհ. Երզնկացի, Ես. Նչեցի), միջնակետ (հմմտ. Ջահուկյան, 1954, 112-113, Մուրադյան, 1971, 193, 302, ԼԲ, 216-218, ըստ որում վերջինս չունի միջառումն-ը):

Հայ. միտ-ք<հե.*med- (հմմտ. ՀԱԲ, 3, 25, այլև Ջահուկյան, 1987, 137): Մտածման նշան (հ. Արովյան) «կախման կետեր» (հմմտ. ԼԲ, 221):

Հայ. յեա(-ին) «հետո» <հե.*pedo- (հմմտ. հետ-ք, ՀԱԲ, 3, 83, 397, նաև Ջահուկյան, 1987, 142), այլև *p[h]et'-, *p[h]ot'- (հմմտ. Гамкрелидзе-Иванов, 1984, 43, 154): Հետին կետ (14-րդ գ. գրիչ) «վերջակետ» (հմմտ. ԼԲ, 179):

Հայ. ներք(-ին) «ներսի կողմը»<հե.*ner-k(o) (հմմտ. ՀԱԲ, 4, 443-444, նաև Ջահուկյան, 1987, 232): Ներքսադրական, նաև ներսադրական (Ստ.Սյունեցի) «ենթամայն», ներսահատ «սպաթարց», ներքոյադրական, ներքսադրական, ներքևահատ (Ստ Սյունեցի) «ստորատ» (հմմտ. ՆՀԲ, ԼԲ, 232-233), ըստ որում ԼԲ-ն չունի առանձին ներսադրական, ներքոյադրական և ներքսադրական տերմինները):

Հայ. նոր «ոչ հին»<հե.*nēvo/*nēvyo- (հմմտ. ՀԱԲ, 3, 466), այլև հե.*nouo-ro- (հմմտ. Ջահուկյան, 1987, 140, Djahukian, 1990, 9)⁸: Նոր տող (Գարեգինյան) «պարբերություն, ռուս. красные строки, ֆրանս. apodose»⁹:

Հայ. շեշտ «սուր կերպով, խիստ, ուժգին»։ ըստ Աճառյանի՝ անհայտ ծագման բառ (հմմտ. ՀԱԲ, 4, 509), իսկ ըստ Ջահուկյանի՝ ոչ անկախ Պետերսոնից, ծագում է հե.*kued- արմատից¹⁰: Ունենք մի շարք տերմիններ. անշեշտություն, բարձրացող-իջնող շեշտ, երկար շեշտ, երկբարձունք շեշտ, իջնող-բարձրացող շեշտ, շեշտաբանություն, շեշտադրություն, շեշտադրում, շեշտագրություն, շեշտանշան (Մ. Սեբաստացի), շեշտառություն, շեշտավորում, շեշտոլոր (Մ. Տեր-Հարությունյան), սլարույկածև շեշտ, պա-

8 G. B. Djahukian. Combinatory vowel changes in Armenian.- Annual of Armenian Linguistics. Vol. 11, 1990, pp. 1-16 (այսուհետև՝ Djahukian, 1990).

9 Տե՛ս Գ. Լ. Գարեգինյան. Ժամանակակից Հայոց լեզու. բարդ նախադասություն. Երևան, 1984, էջ 405 (այսուհետև՝ Գարեգինյան, 1984):

10 Г. Б. Д ж а у к я н. Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967, с. 202 (այսուհետև՝ Д ж а у к я н, 1967).

րուկային շեշտ և այլն: Շեշտ (Թրակ. Թարգմ. հուն. ὄξυν's (τόνος) «սուր (շեշտ)»: Հմմտ. Մուրադյան, 1971, 305-306):

Հայ. ողորկ (ո-ղորկ) «հարթ» <հե.*lorgu-, իսկ հե.*lergu ձևից հայ. լեր-կ (Հմմտ. ՀԱԲ, 3, 556, այլև *lorg- (Հմմտ. Զահուկյան, 1987, 133): Ողորկ (Ստ. Սյունեցի) «սոսկ» (Հմմտ. ՆՀԲ, 2, 509, Զահուկյան, 1954, ԼԲ, 246):

Հայ. ով(ո-վ) «ո՞վ, ո՞ր անձը» <հե.*kuo- (Հմմտ. ՀԱԲ, 3, 548-549, նաև 571-572, Զահուկյան, 1987, 142, նաև 231): Առովասուլթյուն (Գ.Սկևռացի) «առողանուլթյուն»¹¹: ԼԲ-ն չունի այս տերմինը:

Հայ. սիւն «կանգնեցրած փայտ» <հե.*k'ion- կամ *kiyon (Հմմտ. ՀԱԲ, 4, 221), այլև *k'i(u)on (Հմմտ. Զահուկյան, 1987, 132): Սիւն «երկ(վ)որյակ երկու ուղղահայաց գիծ» (Մխ. Աբաստացի, ըստ ԼԲ-ի Միք. Չամչյան, որ ճիշտ է, Հմմտ. Զահուկյան, 1974, 251, ԼԲ, 160):

Հայ. փափ(-ուկ) <հե.*rhaprh- (Հմմտ. Զահուկյան, 1987, 114): Ըստ Ա-ճառյանի՝ անհայտ ծագման բառ (Հմմտ. ՀԱԲ, 4, 492): Փափուկ նշան (Հմմտ. ռուս. мягкий знак, ֆրանս. signe mou. ԼԲ, 303):

Հայ. քաղց(-ը) <հե.*sulid-sk'- (Հմմտ. ՀԱԲ, 4, 546), ինչպես նաև *suad-l-sk'u- (Հմմտ. Զահուկյան, 1987, 152), այլև *suat' (Հմմտ. Гамкрелидзе-Иванов, 1984, 117): Քաղցրահնչունություն (Մխ. Աբաստացի) «վանկերի թավուլթյան, սոսկուլթյան և միջակուլթյան պահպանում» (Հմմտ. Զահուկյան, 1974, 251. ԼԲ-ն չունի այս տերմինը):

բ) Այստեղ համեմատաբար քիչ են այլ լեզուներից փոխառյալ արմատներով կազմված կետագրական տերմինները: Այգ արմատներն են՝ այբ, աւարտ, բաժ(-անեմ), զուրկ(-գիրկ-), խոշ(որ-) ծանր, կերտ(-եմ), ն(ի)շ(-ան), պատիւ, աաշ, տող, քաշ:

Հայ. այբ (Հմմտ. հուն. ἄλφα): Ըստ Աճառյանի՝ «բառիս նախկին ձևն էր ալփ, որ հետո գարձավ այփ և հաջորդ բեն(բ) տառի ազդեցությամբ՝ այբ» (տե՛ս ՀԱԲ, 1, 164-165): Այբաթարց (Գ. Սկևռացի) «առանց այբի» (Հմմտ. Զահուկյան, 1954, 242-243):

Հայ. աւարտ «վերջ, ծայր» <պլ. āvart, Հմմտ. պրթ. (մնք.) an-avard «անվերջ, անվախճան» (Հմմտ. ՀԱԲ, 1, 356, այլև Զահուկյան, 1987, 517): Ավարտակետ (Արս.Բագրատունի) «վերջակետ», ավարտյալ կետ (Թրակ. Թարգմ. տե՛ս վերը. Հմմտ. Մուրադյան, 1971, 301, նաև ԼԲ, 31):

Հայ. բաժ(-անեմ) <իրան. baz' (Հմմտ. ՀԱԲ, 1, 381, Զահուկյան, 1987, 518): Բաժանման գիծ, բաժանման նշան (Խ.Աբովյան) «գիծ, անջատման գիծ» (Հմմտ. ԼԲ, 43, սակայն չունի բաժանման գիծ-ը):

Հայ. զուրկ(-գիրկ-) «զրկված» <ասոր. sriqā, նաև sraq (ըստ Աճառյանի՝ ՀԱԲ, 2, 96-97, նաև 4, 668-669), այլև իրան. zur (Հմմտ. Զահուկյան, 1987, 464-465): Շեշտագրկություն «անշեշտություն» (Բ, 242):

Հայ. խոշ(-որ) «կոշտ, անհարթ, հաստ». ըստ Աճառյանի՝ բառը նույնն է վրաց. ձևերի հետ (ՀԱԲ, 2, 394-395), իսկ ըստ Զահուկյանի՝ կա-

¹¹ Հմմտ. Գ. Բ. Զահուկյան. Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում. Երևան, 1954, էջ 74, այլև 113 (այսուհետև՝ Զահուկյան, 1954):

րելի է առնչություն տեսնել ուրարտ. ձևերի հետ (Ջահուկյան, 1987, 438, 440): *խոչոր* (Ստ. Սյունեցի) «թավ, թավանշան» (Հմմտ. ԼԲ, 140):

Հայ. ծանր «կշռով ծանր», փխր. «սաստիկ, շատ, հաստ, թավ ձայն և այլն»։ ըստ Աճառյանի՝ փոխառյալ կովկասյան լեզուներից, հատկապես վրացերենից (Հմմտ. ՀԱԲ, 2, 445, Հմմտ. Ջահուկյան, 1987, 591), որը կարող է բաղադրված լինել հե. համանման արմատի հետ (Հմմտ. Ջահուկյան, 1987, 593-597): Ծանր «բութի նշանը» (Թրակ. թարգմ. հուն. βαρεσσα, տե՛ս բութ. Հմմտ. Մուրադյան, 1971, 304, ԼԲ, 144):

Հայ. կերտ(չա-կերտ) «գործ, գործվածք, շինություն» <պհլ. *kert*, Հպրս. *krta-*, գնդ. *kdr̥dta-* (Հմմտ. ՀԱԲ, 2, 579, Ջահուկյան, 1987, 529): Չա-կերտ (Մ. Սեբաստացի, ըստ ԼԲ-ի՝ Մ. Տեր-Հարությունյան) «չա տառի վերևի մասից կերտված, երկուստեք գրվող կրկնանիչ՝ բառի և խոսքի մի հատվածի ներառման համար» (Հմմտ. ՀԱԲ, 3, 622):

Հայ. ն(ի)շ-ան «նշան, տեսք» <պհլ. *nisān* (Հմմտ. ՀԱԲ, 4, 460-461, Ջահուկյան, 1987, 537): Ունենք մի շարք տերմիններ և տերմինային անվանումներ. առողջանություն նշան (Ա. Բագրատունի), արտասանություն նշան, բաժանման նշան (Խ. Աբովյան), բացականչական նշան (Հ. Ավգերյան), բացահայտություն նշան, բխանշան (Միք. Չամչյան), գրային նշան, գրանիշ, գրանշան, երկարանշան, երկարացման նշան, զարմացական նշան, թավանշան, կետադրության նշան(ներ), կոշտ նշան, հարցական նշան, հարցանիշ, հարցանշան, միավորության նշան (Խ. Աբովյան), մտածման նշան (Խ. Աբովյան), նշանագիծ, նշանադրություն, նշանակ (Բաղդ. Դպիր), շեշտանշան, պատվանշան, պարուկանշան, սզանշան, սոսկանշան, տողագարձի նշան, տրոհության նշան(ներ), փափուկ նշան (Հմմտ. ԼԲ, 29, 40, 43, 63, 66, 77, 93 և այլն):

Հայ. պատիւ <պհլ. **pativ* (Հմմտ. ՀԱԲ, 4, 43, Ջահուկյան, 1987, 540): Պատիվ (Գ. Սկևռացի, ըստ ԼԲ-ի՝ Կղ. Գալանոս) «հատուկ համառոտման նշան», պատվադիր (Գ. Ավետիքյան) «նշանագիր», պատվազրույթուն (Սիմ. Զուղայեցի), նաև պատվազրույթուն «պատիվ նշանի գործածությունը» (Հմմտ. ԼԲ, 256, 258):

Հայ. տաշ «տաշելը» <իրան. *tas-*, պհլ. *tāsitan* (Հմմտ. ՀԱԲ, 4, 370, նաև 2, 179, Ջահուկյան, 1987, 1987, 548): Ավելի հավանական է ոչ փոխառյալ, հե. **teš-* արմատից բխած լինելը, եթե նկատի ունենանք մի կողմից Հայ. թեքել (նաև թեկել), թակել, ծեքել և այլն ձևերը, մյուս կողմից հնչյունական բաղադրությունը իրանական (նույն արմատից եկող) *tas-*ի հետ (Հմմտ. անգլ. *dash*, ռուս. *тесть* «տաշել, հարթեցնել» և այլն): Տաշ «անջատման գիծ» (Հմմտ. ԼԲ, 289, նաև 20):

Հայ. տող «ուղիղ շարք, գիծ»։ ըստ Աճառյանի՝ «թվում է խալդյան շրջանի բառ» (ՀԱԲ, 4, 418): Իսկ ըստ Ջահուկյանի, ոչ անկախ Շեֆտելովիցից և Պեգերսենից, բառն ունի հե. ծագում, բխում է հե. **dol-* (<**del-*) արմատից, թեև նշվում է հարցականով (Ջահուկյան, 1987, 117): Տողադարձ (Գ. Ավետիքյան) «գրադարձ», տողադարձի նշան (Մ. Սալլանյան) «ենթամնա» (Հմմտ. ԼԲ, 294), նոր տող (Գարեգինյան, 1984, 405):

Հայ. քաշ (նաև քարչ) <իրան. *kars-* (Հմմտ. ՆՀԲ, 2, 981, այլև ՀԱԲ, 4, 53, 562-563, Ջահուկյան, 1987, 549): Քաշ (Գ. Ակևռացի, Վարդան վար-

դասակարգում, նաև Միք. Չամչյան) «պատիվ, պատվագրություն նշան» (Հմմտ. ԼԲ, 307. վերջինս ունի քաշ-ը, բայց ոչ քարշ-ը):

զ) Համեմատարար մեծ թիվ են կազմում անհայտ ծագման այն (բառ)-արմատները, որոնք տարբեր ժամանակներում հիմք են հանդիսացել կետագրական տեմինների բաղադրություն համար: Դրանք են՝ անջ(-ատ), (բաց)-ատ, գիծ, գուր, թարց, լյաշկ, ծակ, կախ(ում), կանչ, կատար, կարծ, կէս (կիս), կոշտ, յայտ(-նի), շուրջ(շրջ-), ոգ(-եմ), ոլոր(-եմ), չա(-կերտ), պար(-ոյկ), սոսկ, ստոր(-ատ), սուղ, վերջ, տրոհ(-ում), փակ(-եմ):

Հայ. անջ(-ատ-եմ). ըստ Աճառյանի՝ անհայտ ծագման բառ (Հմմտ. ՀԱԲ, 1, 210): Հավանաբար հե.*ndhos- «տակ» ձևից՝ -ատ բաղադրիչով (Հմմտ. Ջահուկյան, 1987, 237, 244, 252): Հմմտ. մի կողմից՝ հայ ունջ «խորքը, տակ», ուրջ/վերջ «վերջ», որջ «բույն», իսկ մյուս կողմից՝ հայ. ընդ, ենթ-, թերևս նաև՝ անդ-ունդ «խորխորատ» (ոչ թե՛ ան-գունդ): Անջատման գիծ «բաժանման գիծ, տաշ, գիծ» (Հմմտ. ԼԲ, 20):

Հայ. -ատ(<*ա) (Հմմտ. արմ-ատ. Ջահուկյան, 1987, 237, թերևս հետագայում բաղադրված (հ)ատ-ի հետ): Հմմտ. ՀԱԲ, 3, 51: Բացատ, ԼԲ-ն չունի այս տեմինը (Հմմտ. Ջահուկյան, 1974, 101 և այլն)՝ «ի հակադրություն կետագրական մյուս բոլոր նշանների իբրև նշույթավորված գրանշանների, չնշույթավորված, զրո նշան»: Ստորատ (Թրակ. թարգմ. պատճ. հուն. νποδιστολη՝ տեմինի) «առողջանություն նշան», որ դրվում էր երկու բառերի միջև՝ ներքևից, դրանք միմյանցից զատելու համար» (Հմմտ. Մուրադյան, 1971, 309-310, ԼԲ, 279):

Հայ. գիծ «գիծ, խազ». ըստ Աճառյանի՝ անհայտ ծագման բառ (Հմմտ. ՀԱԲ, 1, 556, այլև Ջահուկյան, 1987, 436, 440): Անջատման գիծ «բաժանման գիծ, գիծ, տաշ» (ռուս. типе, ֆրանս. tiret), բաժանման գիծ (տե՛ս նախորդը), գիծ (տե՛ս նախորդը), գծիկ «միություն գծիկ» (ռուս. черточка), միություն գծիկ, նշանագիծ, փակագիծ (Գ. Ավետիսյան): Հմմտ. ԼԲ, 43, 73, 74, 219, 235, 303:

Հայ. դուր 1) «հյուսնի կտրոց» և 2) «համառոտագրության նշան, պատիվ». ըստ Աճառյանի՝ անհայտ ծագման բառ (Հմմտ. ՀԱԲ, 1, 687), իսկ ըստ Ջահուկյանի՝ «հին հայերենում բացակայում են ոչ միայն դուր, այլև տաշեմ (տե՛ս վերը) և այլն բառերի հե. համարժեքները» (Ջահուկյան, 1987, 265): Թերևս դուր (նաև դուռ)<*դո(ու)ր, *դո(ու)ռ-ն (Հմմտ. չուն<*չո(ու)ն), որոնք կարելի է ի վերջո հանգեցնել հե. *d[h]ur-//*d[h]uer ձևերի «գուռ, գուրս, բակ կամ արգելոց փարախ» իմաստներին (Հմմտ. Гамкрелидзе-Иванов, 1984, 22, 134, 180-181, 721, 743): Ըստ որում հե. *d[h]uer- «բակ, դուռ» ձևը համեմատվում է չում. tu r «գուրս, փարախ» ձևի հետ՝ ելնելով ավելի ուշ տվյալից, քան որ նկատել է Յ. Կարստը (տե՛ս Гамкрелидзе-Иванов, 1984, 877, «Յուլարձան», Վիեննա, 1911, 408):

Հայ. թարց «բացի, գատ, առանց» (թարցել «զատել, առանձնացնել»). ըստ Աճառյանի՝ անհայտ ծագման բառ (ՀԱԲ, 2, 162), իսկ դարձ-ը< հե.*dhrǵ'h(i)- (ՀԱԲ, 1, 639): Թերևս ճիշտ է թարց//թանց տարբերակային ձևերը դարձ (*դարձնամ) ձևին կասելը (Հմմտ. դի-ը//գի-ն «դնեմ», ուստի հավանաբար կարելի է բխեցնել հե. *dhrǵ'h(i) արմատից (Հմմտ. ՀԱԲ, 1, 639, ոչ անկախ ՆՀԲ-ից և Հ. Պետերմանից, այլև Ջահուկյան, 1987, 120,

253-254, 303): Ապաթարց (Թրակ. Թարգմ., հուն. 'αποστροφος «մակակետ, ներսահատ» հմմտ. Մուրադյան, 1971, 309): Այբաթարց (Գ. Սկևռացի) «առանց այբի» (հմմտ. Ջահուկյան, 1954, 242-243), հետագայում՝ ապադարձ (Ատ. Սյունեցի, տե՛ս նախորդը):

Հայ. լյաշկ (նաև լեշկ, լաշկ) «առանձին, լերկ, սոսկ». ըստ Աճառյանի՝ անհայտ ծագման բառ (հմմտ. ՀԱԲ, 2, 275): Եթե նույնն է լերկ «անմաղ» (հմմտ. ոչ անհավանական շ/ր տարբերակայնությունը), վերջինս էլ ողորկ «հարթ, կոկ, հղկված» բառի հետ (ՀԱԲ, 2, 277), ապա մի կողմից ունենք շ//ր (հմմտ. ոգորել//ողոշել և այլն), այլև եա//ե տարբերակայնություն, մյուս կողմից պիտի ենթադրել բառի հե. ծագում *lorg> ողորկ (հմմտ. Ջահուկյան, 1987, 136): Լյաշկ «սոսկ» (հմմտ. ԼԲ, 135):

Հայ. ծակ «ծակ, անցք». ըստ Աճառյանի՝ անհայտ ծագման բառ (հմմտ. ՀԱԲ, 2, 437), ըստ Ջահուկյանի՝ «հին հայերենում բացակայում են ոչ միայն դուր, տաշեմ (տե՛ս վերը՝ Վ.Հ.), այլև ծակեմ և այլն բառերի հե. համարժեքները» (Ջահուկյան, 1987, 265): Եթե թեք(ևլ), թակ(ել), ծեք(ել) ձևերն իրոք ծագում են հե. *teč-արմատից, ապա թերևս ծակել-ը ևս կարող է առնչվել այդ նույն արմատին: Ծակուկ (Արիստակես գրիչ) «նշան, որ ցույց է տալիս, թե տվյալ բացատում այլ գիր (տառ) չկա» (հմմտ. ԼԲ, 144):

Հայ. կախ «կախված, կախ». ըստ Աճառյանի՝ անհայտ ծագման բառ (ՀԱԲ, 2, 486), իսկ ըստ Ջահուկյանի՝ ոչ անկախ Փ. Մյուլերից և Ս. Բուգեից, ծագում է հե. *k'enk-, *k'onk արմատից (հմմտ. ДЖАУКЯН, 1967, 122, 185): Կախման կետեր (Գ. Սևակ) (պատճ. ֆանս. points de suspension, հմմտ. ԼԲ, 145):

Հայ. կանչ (նաև գանչ) «լացի բարձր ձայն». ըստ Աճառյանի՝ բնաձայնություն, որը կազմված է կ պարզ հնչյունից և ն, չ ածանցիչ տարրերից (նաև կոչ-ել, կանչ-ել, խանչ-ել, գանչ-ել և այլն, հմմտ. Ագաթանգեղոս, Թովմ. Արծրունի խանչեմ): Թերևս հնարավոր է կապ տեսնել հայ. կոչ-եմ//գոչ-եմ, գոչ-ումն գոչ-իւն ձևերի հետ (հմմտ. Ջահուկյան, 1987, 129, 155, 235, 390 և այլն): Բացականչական նշան (Հ. Ավգերյան) «երկարացման նշան» (հմմտ. ԼԲ, 63):

Հայ. կատար «ծայր, ավարտ». ըստ Աճառյանի՝ անհայտ ծագման բառ (ՀԱԲ, 2, 537-538), Գ.Ջահուկյանը նախկինում, ոչ անկախ Ս. Մանից, համեմատում է հե. ցեղակից ձևերի հետ (ДЖАУКЯН, 1967, 40), իսկ հետագայում գիտում է իբրև ոչ հե. ծագման բառ (Ջահուկյան, 1987, 268, 614): Կետ կատարյալ (Ա. Բագրատունի) «վերջակետ»: ԼԲ-ն չունի այս տերմինը (տե՛ս էջ 148, 151):

Հայ. կարճ «համառոտ, ոչ երկար». ըստ Աճառյանի՝ անհայտ ծագման բառ (ՀԱԲ, 2, 556-557, այլև Ջահուկյան, 1987, 268, 510): Կարճ (Ատ. Սյունեցի) «սուղ» (հմմտ. ԼԲ, 149):

Հայ. կէս (կիս) «կեսը». ըստ Աճառյանի՝ անհայտ ծագման բառ (ՀԱԲ, 2, 581-582, այլև Ջահուկյան, 1987, 269), Կիսակետ «ստորակետ», կիսաստոր (Արս. Բագրատունի) «ենթակետ, ստորակետ», կիսենթամնա (Արս. Բագրատունի) «տողագարձի գծիկ, ենթամնա» (հմմտ. Ջահուկյան, 1974, 530, 531, ԼԲ, 152):

Հայ. կոշտ «ոչ փափուկ, գուղձ, հողակոշտ». ըստ Աճառյանի՝ անհայտ ծագման բառ (ՀԱԲ, 2, 634-635): Զահուկյանը եղած ստուգաբանական փորձերը համարում է ոչ հավանական (Джаукян, 1967, 113, 147, 169, 306): Կոշտ նշան (ռուս. твердый знак, հմմտ. ԼԲ, 155):

Հայ. յայտ(-նի) «երևացող, անթաքուլյց». ըստ Աճառյանի՝ անհայտ ծագման բառ (ՀԱԲ, 3, 381-382, այլև Զահուկյան, 1987, 231, 396, 400): Բացահայտության նշան(ներ), բացահայտություն (հմմտ. ԼԲ, 63-64):

Հայ. շուրջ (շրջ-) «չորս կողմը, բոլոր կողմերից». ըստ Աճառյանի՝ անհայտ ծագման բառ (ՀԱԲ, 3, 538-539): Զահուկյանը նախկինում բխեցնում էր հե. *(s)ker- «ոլորել, ճկել» արմատից (հմմտ. Джаукян, 1967, 263), իսկ հետագայում գտնում է, որ «իրանական և այլ կարգի փոխառությունների ու անհայտ ծագման բառերի հիման վրա է ձևավորված» (Զահուկյան, 1987, 351), այլև՝ բառը պիտի ունենա «ուրարտական ծագում կամ անցած լինի ուրարտերենի միջոցով» (նույն տեղում, էջ 440): Թերևս հավանական է հմմտ. հայ. շուրթն, շուռ, շուրջ (այլ գեպքում՝ լուռ, լուրջ, լուրթ և այլն) բառերը: Շրջաբեկություն (շ. Երզնկացի) «պարույկ», շուրջառ (Ատ. Այունեցի) «պարույկ» (հմմտ. Մուրագյան, 1971, 306, ԼԲ, 245, 246, 260-261):

Հայ. ոգ(-եմ) «ընթերցանություն մեջ լավ արտաբերություն». ըստ Աճառյանի՝ անհայտ ծագման բառ (հմմտ. ՀԱԲ, 3, 549): Մտ. Այունեցին (8-րդ դար) Թրակ. թարգմանչի առոգանություն տերմինի դիմաց ունի նաև առովասություն, որպիսով առկա է ոգ-//ով- տարբերակայնություն (թերևս ծագումնային, ոչ թե կեղծ ստուգաբանական): Ուստի հմմտ. մի կողմից՝ ոգ(-եմ) < հե. ouoguh- (*eueguh-), (հ)ոգ(ի) < հե. *rouiio-, (հ)-ազ(-ազ) հե. pau, մյուս կողմից՝ (հ)ով < հե. *rou (ոգ-ի «անձ, շունչ»), (հ)եւ-ամ < հե. peua- (տե՛ս Джаукян, 1967, 226-227, 276 և այլն, Զահուկյան, 1987, 145, Djahukian, 1990, 4, 9 և այլն): Առոգանություն (Թրակ. թարգմ., պատճ. հուն. προς-ωοια «առասացություն, առերգություն՝ ոչ սովորական արտասանվածք» (հմմտ. Մուրագյան, 1971, 394): Առոգանության նշան(ներ) (հմմտ. ԼԲ, 29) և այլն:

Հայ. ոլոր(-եմ) «գալարել, պրկել, պնդել». ըստ Աճառյանի՝ անհայտ ծագման բառ (ՀԱԲ, 3, 551), Ըստ Զահուկյանի՝ ոչ անկախ Տերվիչյանից, ծագում է հե. *ulo-ro արմատից, թեև նշվում է հարցականով (հմմտ. Джаукян, 1967, 269, Զահուկյան, 1987, 155, Djahukian, 1990, 8): Շեշտոլոր (Թրակ. թարգմ., պատճ. հուն. ογντονον տերմինի. հմմտ. Մուրագյան, 1971, 306): Ոլորակ Թրակ. թարգմ., պատճ. հուն. τονος տերմինի. հմմտ. Մուրագյան, 1971, 305, ոլորակաձև (Մխ. Սեբաստացի) «ոլորակ» (հմմտ. Զահուկյան, 1974, 249-250, այլև ԼԲ, 243, 246):

Հայ. չա(-կերտ). ըստ ՆԲՀ-ի՝ հայ. չա տառից կերտված: Սա ընդունում է Հ Աճառյանը (ՀԱԲ, 3, 622): Չակերտ «գրավոր խոսքի որևէ բազմաբնի վրա երկուստեք դրվող կրկնագիր նշան» (Մխ. Սեբաստացի. հմմտ. ԼԲ, 248):

Հայ. պար(ոյկ). պար «շուրջ» և -ոյկ, որն ածանց է. ըստ Աճառյանի՝ պար-ը անհայտ ծագման արմատ է (ՀԱԲ, 4, 65): Պարույկ «պարբեկություն, շրջաբեկություն, շուրջառ» (Թրակ. թարգմ., պատճ. հուն.

περιστωμενος «չուրջը ձգվող»։ Հմմտ. Մուրադյան, 1971, 306), պարուկաձև շեշտ, պարուկային շեշտ, այլև պարուկանշան (Մխ. Սերաստացի) «պարուկ» (Հմմտ. Զահուկյան, 1974, 248-249, այլև ԼԲ, 261)։

Հայ. սոսկ «մենակ, լոկ, պարզ»։ ըստ Աճառյանի՝ անհայտ ծագման բառ (ՀԱԲ, 4, 244)։ Փորձ է եղել Տերվիշյանի հետևողութամբ բխեցնելու հե. *seue- «ինքր, ինքնին» արմատից (Հմմտ. Джайкян, 1967, 251)։ Ասոկ (Թրակ. Թարգմ., պատճ. հուն. φνλος «չնչի բացակայություն, անշնչեղ արտասանություն նշան՝ հունարենում»։ Հմմտ. Մուրադյան, 1971, 308, ԼԲ, 276), սոսկանշան (Միք. Չամչյան) «սոսկ, լյաշկ» (Հմմտ. Զահուկյան, 1974, 342, ԼԲ, 276)։

Հայ. ստոր «տակը, ներքև, վայր»։ ըստ Աճառյանի՝ անհայտ ծագման բառ» (ՀԱԲ, 4, 278)։ Ըստ Զահուկյանի՝ կարելի է կապել հուն. νπο- և κατα- ածանցների հետ, այլև կապ տեսնել ուրարտ. -արի և հայ. ստ-որ ձևերի միջև (Զահուկյան, 1987, 187, այլև 438-439)։ Ստորատ (Թրակ. Թարգմ., պատճ. հուն. ν'ποδιαστολη՝ «երկու բառի միջև՝ ներքևից դրվող նշան, դրանք իրարից զատելու նպատակով»։ Հմմտ. Մուրադյան, 1971, 309)։ Ստորին (Մ. Քերզոզ) «ստորակետ», կիսաստոր (Արս. Բազրատունի) «ստորակետ» (Հմմտ. Զահուկյան, 1974, 531, ԼԲ, 279, ընդ որում ԼԲ-ն չունի կիսաստոր տերմինը)։ Հիշենք, որ ստորակետ և նման տերմինների մեջ ունենք ստոր- նախածանցը՝ ձևացած հիշյալ արմատից։

Հայ. սուղ «քիչ, կարճ, համառոտ»։ ըստ Աճառյանի՝ անհայտ ծագման բառ (ՀԱԲ, 4, 250, տե՛ս նաև սղ-ոց)։ Սուղ (Թրակ. Թարգմ., պատճ. հուն. βραχυν'ς «կարճ արտասանություն ունեցող ձայնավորի վրա գրվող նշան»։ Հմմտ. Մուրադյան, 1971, 186, այլև 202, 308), սղանշան (Միք. Չամչյան) «սուղ» (Հմմտ. ԼԲ, 275)։

Հայ. վերջ «ծայր, վախճան»։ ըստ Աճառյանի՝ անհայտ ծագման բառ (ՀԱԲ, 4, 332)։ Զահուկյանը, ոչ անկախ Ա. Ֆիկից, կապ է տեսնում հայ. վեր, վերջ ձևերի միջև և բխեցնում հե. *uer- ձևից (Հմմտ. Джайкян, 1967, 264, 267)։ Հավանաբար՝ Հմմտ. հայ. վերջ //ա-ւարտ, անջ-, ունջ և այլն ձևերը։ Վերջակետ (Կղ. Գալանոս) «հետին կետ, մեծակետ, ավարտակետ, կրկին միջակետ» (Հմմտ. ԼԲ, 286)։

Հայ. տրոհ(-ում) «բաժանելը, զատելը»։ ըստ Աճառյանի՝ անհայտ ծագման բառ (ՀԱԲ, 4, 437-438)։ Տրոհակ(ք) (Արս. Բազրատունի) «կետեր, կետադրական նշաններ» (Հմմտ. Զահուկյան, 1987, 530), տրոհություն նշաններ (Գ. Ավետիքյան), տրոհություն (Թրակ. Թարգմ., պատճ. հուն. διαστολη՝ «բաժանում»։ Հմմտ. Մուրադյան, 1971, 301, այլև ԼԲ, 295)։

Հայ. փակ «ծածկած, ծածուկ»։ ըստ Աճառյանի՝ անհայտ ծագման բառ (ՀԱԲ, 4, 470-471)։ Ըստ Զահուկյանի՝ փակեմ-ը «բնիկ հնգեվրոպական չէ» (Զահուկյան, 1987, 268), Հավանաբար՝ Հմմտ. հայ. փունդ «մի տեսակ աման, արկղ», փունջ «ի մի բերված» կամ «բույսի ցողուն», այլև՝ փած- «հագնել», որից դիփածանիմ, սփածանիմ «կապել մեջքը՝ շորով» (Հմմտ. ՀԱԲ, 4, 524, 470), փակագիծ (Գ. Ավետիքյան) «փակագիծ, եղնդ-նաձև» (Հմմտ. ԼԲ, 303)։

Այսպիսով՝ Հայոց լեզվի կետադրական տերմինները սլատմականորեն հանգես են գալիս իմաստային և գործառական զգալի տարբերակվածութ-

յամբ: Դրանց ծագումնային ընդլիթի և կառուցվածքային (բառային, բառակազմական և բառակապակցական) առանձնահատկությունների մանրամասն ուսումնասիրությունը, որն այս աշխատանքում իրականացվում է (հնդեվրոպական լեզուներին) ընդհանուր համեմատաբանության և հայոց լեզվի համեմատական ուսումնասիրության մեջ տողերիս հեղինակի կողմից մշակվող նոր մոտեցման՝ տարբերակայնության (վարիատիվություն) ելակետային դրույթների հիման վրա, այլև այդ դրույթների մասնակի դործադրմամբ, ավելի հանդամանորեն է ներկայացնում հայերենի տերմինաբանության սվյալ ոլորտի երևույթները՝ վերցված ոչ միայն ինքնին, այլև հայոց լեզվի բառապաշարի պատմության առումով¹²:

ПРОИСХОЖДЕНИЕ И СТРУКТУРА ТЕРМИНОВ ПУНКТУАЦИИ
АРМЯНСКОГО ЯЗЫКА

ВАЗГЕН АМБАРЦУМЯН

Р е з ю м е

Армянская пунктуация в истории языка развивалась как по словообразованию (деривационное развитие), так и по семасиологии (семантическое-терминологическое развитие), вследствие чего в грамматической терминологии армянского языка существуют разнообразные слова-термины или терминологические варианты. В статье исследуются соответствующие термины, использованные в разных грамматических трудах в разное время истории армянского языка. Термины такого рода анализируются на основе выделения генетического (по происхождению), словообразовательного, а также семасиологического вариантов. Большое внимание уделено терминологическим вариантам, основываясь на принципах лингвистической вариативности, имеющей место при исследовании истории армянского языка вообще, и выдвинутые в последние годы автором настоящей статьи — в частности.

THE ORIGIN AND STRUCTURE OF THE ARMENIAN PUNCTUATION TERMS

VAZGEN HAMBARTSUMYAN

S u m m a r y

During the history of the language, the Armenian punctuation has developed according to word form (derivation development) as well as semantically (semantic term development) resulting in the existence of different word terms or terminological variants in Armenian grammatical terminology. In the article are studied corresponding terms which were used in the Armenian grammatical works of different periods of the history of the Armenian language. Such terms are analysed on the basis of differentiation of genealogy (by origin), word formation and semasiology. A special attention is paid to the terminological variants based on the principles of linguistic variation which is observed while generally studying the history of the Armenian language and particularly during last years brought up by the author of this article.

12 Հմտ. V. G. H a m b a r d z u m y a n. Linguistic variations and the investigations of the Phonetic variants of Old Armenian Literary Language.— Sixieme Colloque International de Linguistique Armenienne. Paris. 5-9 juillet 1999. Resumes. Paris, 1999, p. 15.